ԲՅՈՒԼԵՏԵՆ

Դեկտեմբեր 2023Թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Դեկտեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 3 նիստ՝ 07.12.2023թ.-ին, 21.12.2023թ.-ին և 28.12.2023թ.-ին:

07.12.2023թ. նիստի օրակարգում ընդգրկված էին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունումը, որակի պահանջների պահպանման և կարգապահական հանձնաժողովի նախագահի փոփոխությունը, Պալատի խորհրդի 06.07.23թ N 19-L որոշման մեջ փոփոխության կատարումը:

21.12.2023թ. նիստի օրակարգում ընդգրկված էին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց և մեկ կազմակերպության Պալատի անդամ ընդունումը:

28.11.2023թ. նիստի օրակարգում ընդգրկված էին Պալատին անդամակցելու համար դիմած ֆիզիկական անձանց Պալատի անդամ ընդունումը և Պալատի անդամակցության դադարեցումը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 11.12.2023թ.-ին, 28.12.2023թ.-ին: Նիստերում ընդունված որոշումներով առաջարկվել է Պալատի խորհրդին 3 անձանց շնորհել աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում, ինչպես նաև հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

ՇՄԶ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

03.12.2023թ.-ին տեղի է ունեցել «ՇՄԶ-Պահուստներ (IAS 37), Բաժնեմասերի վրա հիմնված վճարումներ (IFRS 2), Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքեր (IAS 10)» թեմայով դասընթացը: Այն վարում էր Մարինա Ենգիբարյանը

18.12.2023թ. -ին տեղի է ունեցել «Ավելացված արժեքի հարկի փոփոխությունները և նախագծերը» թեմայով դասընթացը: Այն վարում էր Ասանեթ Ալոյանը:

19.12.2023թ.-ին տեղի է ունեցել «Շահութահարկ հարց և պատասխան» թեմայով դասընթացը: Այն վարում էր Լեռնիկ Հարությունյանը:

20.12.2023թ.-ին տեղի է ունեցել «Ի՞նչ չգիտեն ղեկավարներն աուդիտի մասին» թեմայով դասընթացը: Այն վարում էր Արա Չալաբյանը:

21.12.2023թ.-ին տեղի է ունեցել «Ավելացված արժեքի հարկի փոփոխությունները և նախագծերը» (շարունակություն) թեմայով դասընթացը: Այն վարում էր Ասանեթ Ալոյանը:

26.12.2023թ.-ին տեղի է ունեցել «Շահութահարկ հարց և պատասխան» (շարունակություն)թեմայով դասընթացը: Այն վարում էր Լեռնիկ Հարությունյանը:

27.12.2023թ.-ին տեղի է ունեցել «Փողերի լվացման և ահաբեկչությունների ֆինանսավորման դեմ պայքարի առանձնահատկությունները հաշվապահության ոլորտում, միջազգային պատժամիջոցները» թեմայով դասընացը: Այն վարում էր Տաթևիկ Կարապետյանը:

ԵԱՏՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՏՄ ԱԽՄ նախագահության նախագահ Թաթուլ Մովսիսյանի նախաձեռնությամբ 2023թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին ԵԱՏՄ պետությունների մասնագիտացված կառույցների ու ԵԱՏՄ ԱԽՄ հինգ հանձնաժողովների կողմից նախապատրաստվեց և 2023թ. հոկտեմբերի 31-ին ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովին տրամադրվեց համապարփակ վերլուծություն, որում ներկայացվել է առանձին անհամապատասխանություններ ԵԱՏՄ անդամ պետությունների՝ աուդիտորական գործունեության կարգավորմանը վերաբերող ազգային օրենսդրությունների և ԵԱՏՄ շրջանակներում կնքված Համաձայնագրով նախատեսվող դրույթների միջև, ինչպես նաև առաջարկություններ աուդիտի միասնական շուկայի ձևավորմանը խոչընդոտող ռիսկերի վերաբերյալ:

2023թ. նոյեմբերի 17-ով թվագրված պատասխան նամակում ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովը բարձր է գնահատում ԵԱՏՄ ԱԽՄ-ի իրականացրած աշխատանքը և նշում, որ ներկայացված վերլուծությունը նկատի կառնվի Համաձայնագրի հետագա աշխատանքը կազմակերպելիս: ԵԱՏՄ տնտեսական հանձնաժողովը ԵԱՏՄ ԱԽՄ-ի նամակ-վերլուծությունը ուղարկել է ԵԱՏՄ անդամ պետությունների իրավասու պետական կառույցներին՝ ոլորտը կարգավորող ազգային օրենսդրությունները Համաձայնագրի դրույթների համապատասխանեցնելու նպատակով: